ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

11 մարտի, 2021թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
աշխատակազմի ղեկավար –
գլխավոր քարտուղարի
ժամանակավոր պաշտոնակատար
ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գրիգորյան,

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 81-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև Ազգային ժողովի աշխատակարգի VIII գլուխը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը ներկայացնում է գրավոր առաջարկներ կառավարությանկողմից ներկայացված և առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և կից փաթեթի (կոդ՝ Կ-832) վերաբերյալ:

Առդիր՝ *03* թերթ:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն
0095 Երևան,
Բաղրամյան 19, 134

Republic of Armenia
Yerevan 0095
19 Baghramyan Street, 134

+374 11 513 423 | www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 81-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն
իր 2021 թվականի մարտի 09-ի նիստում

ՈՐՈՇԵՑ

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից ներկայացված և առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (կոդ՝ Կ-832) վերաբերյալ ներկայացնել գրավոր առաջարկներ:

126 Է. Մարուքյան _____

125 Գ. Գորգիսյան _____

123 Ս. Ալեքսանյան _____

116 Ա. Խաչատրյան _____

124 Գ. Բաղդասարյան _____

117 Ա. Սամսոնյան _____

127 Ս. Ստեփանյան _____

118 Հ. Բաբայան _____

128 Է. Անդրեասյան _____

119 Ա. Եղիազարյան _____

129 Ռ. Ստեփանյան _____

120 Ա. Կոստանյան _____

130 Տ. Սիմոնյան _____

121 Կ. Սիմոնյան _____

131 Հ. Այվազյան _____

122 Ս. Գրիգորյան _____

132 Ս. Մինասյան _____

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ ՎԱՀԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

11 մարտի, 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՆԻ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ գործընկերներ,

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 81-րդ հոդվածի 1-ին մասը՝ ներկայացնում ենք հետևյալ առաջարկն առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ «Օրենք») փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (կոդ՝ Կ-832, այսուհետ՝ «Նախագիծ») վերաբերյալ.

Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքում լրացվող 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի միջև լրացնել նոր կետ՝

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն
0095 Երևան,
Բաղրամյան 19, 134

Republic of Armenia
Yerevan 0095
19 Baghramyan Street, 134

+374 11 513 423 | www.brightarmenia.am

«հայցվորները՝ անհայտ կորած զինծառայողներին կամ ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած քաղաքացիական անձանց անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումներով.»:

Քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին: Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացին կարող է դատարանի կողմից անհայտ բացակայող ճանաչվել, եթե երեք ամսվա ընթացքում տեղեկություններ չկան զինծառայողի կամ այլ քաղաքացու գտնվելու վայրի մասին:*

Խնդիրը կայանում է նրանում, որ վերջիններիս ընտանիքները շատ հաճախ գտնվում են սոցիալապես անապահով վիճակում: Իսկ դատարանի կողմից դիմումը/հայցը կարող է հետ վերադարձվել՝ պետական տուրքը չվճարված լինելու հետևանքով:

Ըստ այդմ՝ առաջարկում ենք խնդրո առարկա գործերով նախատեսել պետական տուրքի արտոնություն՝ ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած անձանց, այդ թվում՝ զինծառայողների ընտանիքների անդամների համար:

Ելնելով երկրի սոցիալ-տնտեսական ոչ բարվոք իրադրությունից՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների գործողության մեջ մտնելու վերաբերյալ դրույթներով (Նախագծի 6-րդ հոդված) սահմանել, որ դրանք ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 01-ից:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ